ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 18 >> հունիսի 2013թվականի N 64 -Ն

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՄՈՒՇ-2» ԹԱՂԱՄԱՍԻ № 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող «Մուշ-2» թաղամասի 0,189901(զրո ամբողջ հարյուր ութսունինը հազար ինը հարյուր մեկ) հա ընդհանուր մակերեսով անավարտ բնակելի շինությունը կառուցվել է 1990 թվականին: Երկար տարիներ մնալով բարձիթողի վիճակում այն ենթարկվել է թալանի և միևնույն ժամանակ մթնոլորտային ազդեցությունների հետևանքով դարձել է վթարային և օգտագործման համար ոչ պիտանի: Շինության ամրացման և լրակառուցման համար պահանջվում են զգալի ֆինանսական միջոցներ, որի հնարավորությունը համայնքի բյուջեն չունի:

Նկատի ունենալով վերոգրյալ հանգամանքները, շինության ամրացման և լրակառուցման համար մասնավոր ներդրումներ ներգրավելու նկատառումով և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող «Մուշ-2» թաղամասի № 14/1 հասցեի 0,189901 (զրո ամբողջ հարյուր ութսունինը հազար ինը հարյուր մեկ) հա ընդհանուր մակերեսով անավարտ բնակելի շինությունը՝ կառուցապատման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 0, 216086 (զրո ամբողջ երկու հարյուր տասնվեց հազար ութսունվեց)հա մակերեսով համայնքապատկան հողամասի հետ միասին, օտարել աճուրդով:
2. Ելնելով «Պ.Ա.Գ. էսթեյթ» ՍՊԸ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 9-ի № 066 հաշվետվությամբ գնահատված շինության շուկայական արժեքից՝ օտարման մեկնարկային գին սահմանել 4100000 (չորս միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Աճուրդը կազմակերպել և իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (11) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ